Յարգելի պրն.

Էդուարդ Բաղդասարեան,

Թեհրան:

Նկատի առնելով այն բարեբաստիկ երեւոյթը որ ,,Սարօ,, Գրատունը, 50-ն շարունակեալ տարիներ հասարակական օգտագործումը կազմակերպելու, օգտաշատ հիմնարկ է հանդիսացել։ Հաւաքելով տպագիր արտադրանքներ եւ տարբեր ճաշակ ու մանկագիտութիւն ունեցող ընթերցողների մատակարարելով, խթան է հանդիսացել ընթերցասէր մասւոր մակարդակը բարձրացնելու գործում եւ որ գլխաւորն է, Գրատունում բերւած գրքերի ընթերցումով շեշտաւել է հայ հայրենակիցների տեղեկութիւններն ու հայրենասիրական զգացմունքները:

Ուստի, մի խումբ գրասէրներ, տեղին համարեցին հրապարակական հանդիսութեամբ նշելու Գրատան հանրօգուտ գործունէութեան 50-ամեայ Ոսկեայ Յոբելեանը:

,,Սարօ,, Գրատունն հիմնուել է, 1933 թւի Հոկտ. 9-ին, Թեհրանում ու ներկայում հանդիսացել է Իրանի ու Միջին Արեւելքի ամենահարուստ Գրատուներից մէկը որ, պատիւ է բերում հայութեան, յատկապէս Իրանահայութեան:

Ընթացիկ տարւայ Հոկտ. 9-ին, լրանում է Հիմնադրութեան Յիսունամեայ Ոսկեայ Տարեդարձը: Յոբելեանական հանդիսութեամբ գնահատենք Հիմնողի ու Տնօրէնի գործը ու արժէքաւորենք Գրատան գոյութիւնը:

Այսու գրութեամբ, Ձեզ հրաւիրում ենք անդամակցելու կազմւելիք Յոբելեանական Յանձնախումբին, որի առաջին նիստը կայանալու է, ուրբաթ, 15 Ապրիլ, 1983, կէսօրից յետոյ ժամի 4-ին, պրն. Սարօ Յովսէփեանի բնակարանում,- Թալղանի պողոտայ- Նախկին Թախտը Ջամշիդ-փողոցի Բհարի ու Աբբաս Թալղանի միջեւ ընկած Աճար փողոց, թիւ 46, 2-րդ յարկ. Հեռախօս 750206:

Խնդրում ենք բարեհաճել Ձեր համաձայնութիւնը յայտնելու գրաւոր կամ բանաւոր ,,Սարօ,, Գրատունը, ամենաուշը մինչեւ 10 Ապրիլ, 1983, Հեռախօս 676853-ով:

Կանխայայտ շնորհակալութեամբ

Նախաձեռնող մի խումբ Գրասէրներ

Ժորժ Խասանեան.

Թեհրան, 15 Մարտ, 1983.